



## ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### ՈՐՈՇՈՒՄ

12 փետրվարի 2021 թվականի թիվ 29-Ա  
ք. Երևան

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014  
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 30-Ի ԹԻՎ 18-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 21-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Պետական իշխանության մարմիններում հաստիքների առավելագույն թիվը սահմանելու մասին» թիվ 706-Ա որոշումը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը ***որոշում է.***

1. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի կառուցվածքում ավելացնել «Տեսալսողական մեդիայի գործունեության վերլուծության և մեթոդաբանության բաժին»՝ երկու հաստիքներով:
2. Ծրագրերի մոնիտորինգի և վերահսկողության վարչության վերահսկողության բաժնում ավելացնել երկու հաստիք:
3. Գործերի կառավարչությունում ավելացնել հավաքարարի մեկ հաստիք:

Նախագահ

Տ. Հակոբյան